ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐՆ ՈՒ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Անկախությունից ի վեր Հայաստանի քաղաքական համակարգի կայունության վրա նշանակալի ազդեցություն են ունեցել ինչպես ներքաղաքական, այնպես էլ արտաքին գործոնները: Ընդ որում՝ ներքին գործոնների բացասական ազդեցության աղբյուրը հիմնականում եղել է իշխանությունների լեգիտիմության խնդիրը, որը նպաստել է քաղաքացիական անհնազանդությունների մակարդակի աճին, իսկ արտաքին գործոններից ամենակարևորը ղարաբաղյան հիմնախնդիրն է:

Խորհրդային Միության կազմալուծումից անմիջապես հետո Հարավային Կովկասը դարձավ աշխարհի ամենաանկայուն տարածաշրջաններից մեկը: Հետխորհրդային տարածքի զինված ութ բախումներից չորսն այս տարածաշրջանում են ծավալվել (հայ-ադրբեջանական, վրաց-աբխազական, վրաց-օսական և ներվրացական քաղաքացիական պատերազմները)[1]: Մինչ այսօր ղարաբաղյան, աբխազական և հարավօսական հակամարտությունները չեն հանգուցալուծվել, իսկ մասնավորապես արցախյան հիմնախնդրում իրավիճակը շարունակվում է մնալ լարված: Ինչպես հայտնի է, 1994 թ. «Բիշքեկի արձանագրության» ու «Հրադադարի մասին պայմանագրի» կնքմամբ[*] հայ-ադրբեջանական հակամարտությունն ստացավ «ո՛չ խաղաղություն, ո՛չ պատերազմ» կարգավիճակը: Ավելին, սահմանին լարվածության աճը գրեթե միշտ ուղղակիորեն պայմանավորված է եղել Հայաստանի ներքաղաքական կարևոր իրադարձություններով: Դրա վառ օրինակներից են 2008 թ. ՀՀ նախագահական ընտրություններին հաջորդած իրադարձությունները, երբ հետընտրական գործընթացներն ուղեկցվեցին բազմահազարանոց ցույցերով և բախումներով, իսկ ադրբեջանական կողմը, օգտվելով երկրի ներքաղաքական լարված իրավիճակից, մարտի սկզբին փորձեց գրավել ԼՂՀ պաշտպանության բանակի Մարտակերտի շրջանի դիրքերը: Մեկ այլ լարված իրավիճակ ստեղծվեց

[1] Տե՛ս **Маркедонов С. М.** Постсоветский Южный Кавказ: традиционализм плюс модернизация // Прогнозис, 2007, № 1 (9), էջ 336:

[*] 1994 թ. մայիսի 5-ին Բիշքեկում ստորագրվեց «Բիշքեկյան արձանագրությունը», որով կոչ էր արվում մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին դադարեցնել կրակը: Նախապատրաստվեց նաև «Հրադադարի մասին պայմանագիրը», որը մայիսի 9-ին Բաքվում ստորագրեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդովը, մայիսի 10-ին Երևանում՝ Հայաստանի պաշտպանության նախարար Ս. Սարգսյանը և մայիսի 11-ին Ստեփանակերտում՝ ԼՂ բանակի հրամանատար Ս. Բաբայանը:

2012 թ. ապրիլ և հունիս ամիսներին՝ ՀՀ խորհրդարանական ընտրություններից, ինչպես նաև ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի տարածաշրջան այցից առաջ: Ադրբեջանական կողմն այդ անգամ թիրախավորել էր ոչ թե ղարաբաղյան, այլ ՀՀ Տավուշի մարզի հայ-ադրբեջանական սահմանը: Գնդակոծվեցին սահմանամերձ Դովեղ գյուղի մանկապարտեզն ու դպրոցը, արձանագրվեց դիվերսիոն ջոկատների ներթափանցման մի քանի փորձ[2]: 2014 թ.-ից սկսած՝ հայ-ադրբեջանական սահմանի լարվածությունը[3] գնալով աճում էր, իսկ արդեն 2016 թ. ապրիլին Ադրբեջանն անցավ ռազմական լայնածավալ գործողությունների: Այսպես՝ 2016 թ. ապրիլի 2-5-ը տևած գործողություններն ստացան «Քառօրյա պատերազմ» անվանումը: Դրանք հրադադարի 22 տարիների առավել լարված և առավել մեծ կորուստների օրերն էին[4]: Տարբեր աղբյուրների համաձայն՝ հայկական կողմն ունեցել է ավելի քան 100, ադրբեջանականը՝ մի քանի անգամ ավելի զոհ[5]:

Ապրիլյան «Քառօրյա պատերազմը» մեծ հարված հասցրեց ոչ միայն Հայաստանի և Ադրբեջանի քաղաքական համակարգերի, այլև տարածաշրջանի կայունությանը: Հարավային Կովկասն աշխարհի առավել ռազմականացված տարածաշրջաններից է[6]. վերջինիս ռազմական ծախսերը (ՀՆԱ-ի 3,4 %) 1,8 անգամ գերազանցում են աշխարհի միջինը[7]: Տարածաշրջանում 2017 թ. ամենաբարձր ռազմական ծախսերը, ըստ ՀՆԱ մասնաբաժնի, Հայաստանինն են (4 %)[8]: Դեռ ավելին, Բոննի փոխարկման միջազգային կենտրոնի (BICC) Համաշխարհային ռազմականացման 2017 թ. ինդեքսի (Global Militarization Index) համաձայն (ընդգրկում է 2016 թ. տվյալները)՝ աշխարհի 151 երկրների շարքում Հայաստանը 3-րդ տեղում է՝ Իսրայելից և Սինգապուրից հետո: Ադրբեջանը 11-րդ, իսկ Վրաստանը 55-րդ տեղում է[9]:

Տարածաշրջանի ռազմականացվածության և կայունության սպառնալիքների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում

---

[2] Տե՛ս **PanArmenian.Net,** «Ո՛չ պատերազմ, ո՛չ խաղաղություն. ինչպես են իրավիճակն Արցախում ամեն անգամ վտանգավոր եզրագծի հասցնում», նոյեմբերի 13, 2014 (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ http://www.panarmenian.net/arm/details/184763/:

[3] Ավելի մանրամասն տե՛ս «2014 թ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության գործունեության հաշվետվություն», ՀՀ ԱԳՆ, 2015, էջ 6-7 (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.mfa.am/filemanager/Statics/report2014.pdf:

[4] **Ե. Զոհրաբյան,** Ապրիլյան պատերազմի լուսաբանումը միջազգային լրատվամիջոցներում, «Հայագիտության հարցեր», 3 (12), ԵՊՀ հրատ., 2017, էջ 122-123:

[5] Տե՛ս «Զեկույց 2016 թ. ապրիլին պատերազմական գործողությունների ընթացքում մահացած զինծառայողների մահվան հանգամանքների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովության վիճակի մասին», Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ, 2016 (վերջին մուտքը՝ 20.08.2018)՝ http://hcav.am/tag_publications/1679/:

[6] Ավելի մանրամասն տե՛ս **Маркедонов С. М.**, նշվ. աշխ., էջ 336:

[7] Հաշվարկները կատարվել են Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների հիման վրա (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.sipri.org/databases:

[8] Տե՛ս Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալները (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.sipri.org/databases:

[9] Տե՛ս **Mutschler M.** Global Militarization Index 2017. BICC, էջ 2, 5, 14 (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.bicc.de/uploads/tx_bicctools/GMI_2017_EN.pdf:

կազմելու համար ներկայացնենք նաև հարավկովկասյան 3 երկրների ռազմական ծախսերը ԱՄՆ դոլարով: Այս առումով Ադրբեջանը՝ որպես նավթ արդյունահանող երկիր (բյուջեի հարկային մուտքերի մոտ 70 %-ը ապահովվում է նավթային սեկտորի հաշվին), ունի 3,5-4,5 անգամ ավելի մեծ ծախսեր: Եվ պատահական չէ, որ հենց նավթի գների անկումը և մանաթի արժեզրկումը ստիպեցին Ադրբեջանին 2015 թ.-ից սկսած կրճատել ռազմական ծախսերը: Մինչ այդ՝ 2011 թ.-ից սկսած, նկատելի էր նրա ռազմական բյուջեի արագ տեմպերով աճ, ինչը ևս փաստում է, որ Ադրբեջանը տարիներ շարունակ նախապատրաստվում էր պատերազմական գործողությունների: 2017 թ. Ադրբեջանի ռազմական ծախսերը դարձյալ աճել են՝ 1,4 մլրդ դոլարից հասնելով 1,53 մլրդ-ի (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1

Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ռազմական ծախսերը (ԱՄՆ մլն դոլար)*



Անդրադառնալով Հայաստանի քաղաքական համակարգի կայունության ներքաղաքական գործոններին՝ կարևոր է դիտարկել քաղաքացիական անհնազանդությունների և ընդվզումների մակարդակները: Գծապատկեր 2-ում ներկայացված են դրանց մակարդակի տատանումները 2000-2017 թթ., որոնց բարձր մակարդակները վկայում են քաղաքական կայունության վրա քաղաքացիական անհնազանդությունների ուժեղ ազդեցության մասին: Վերլուծելով ստացված տվյալները՝

* Գծապատկերը պատրաստվել է Ստոկհոլմի խաղաղության հետազոտության միջազգային ինստիտուտի (SIPRI) տվյալների հիման վրա (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.sipri.org/databases:

նկատելի է, որ 2003 թ., 2008 թ., 2013 թ., 2015 թ., 2016 թ. արձանագրվել է քաղաքացիական անհնազանդությունների բարձր մակարդակ:

Գծապատկեր 2

Հայաստանում քաղաքացիական անհնազանդությունների մակարդակը (2000-2017) *



Այսպես՝ 2003 թ. քաղաքական իրադարձությունների ակտիվ տարի էր: Այդ ընթացքում տեղի են ունեցել և՛ նախագահական, և՛ խորհրդարանական ընտրություններ, ինչպես նաև՝ հանրաքվե: Մասնավորապես նախագահական ընտրությունների հետընտրական գործընթացները ուղեկցվեցին բողոքի ցույցերի աճով: Ընդդիմությունն իր անհամաձայնությունն էր հայտնել նախագահական ընտրությունների արդյունքների վերաբերյալ: Հանրապետության նախագահ էր վերընտրվել Ռոբերտ Քոչարյանը՝ ձայների 67,5 տոկոսով: Իսկ 2008 թ. նախագահական հետընտրական գործընթացներն ամենացավալին էին: Տեղի ունեցան զանգվածային բողոքի ցույցեր և հանրահավաքների շարք, երբ հայտարարվեց ՀՀ վարչապետ և պաշտպանության նախկին նախարար Սերժ Սարգսյանի հաղթանակը՝ 52,8 տոկոս ձայներով:

* Տվյալների աղբյուրը՝ հեղինակի ուսումնասիրություններն ու գնահատականները: «Քաղաքացիական անհնազանդությունները» ՔԳՌ-ի փոփոխականներից է, որը ներառում է սահմանված ժամանակահատվածում ցույցերի, գործադուլների, սոցիալական անկարգությունների քանակը, այդ թվում նաև քաղաքական ձերբակալությունների ու սպանությունների դեպքերը: Հաշվի առնելով նման վիճակագրության բացակայությունը, հիմնվելով թերթերի, հետազոտությունների, հաշվետվությունների տվյալների վրա՝ դրանք գնահատվել են 0-5 սանդղակի միջակայքում, որտեղ 0-ն քաղաքացիական անհնազանդությունների իսպառ բացակայությունն է, 5-ը՝ դրանց առավելագույն քանակը՝ հեղաշրջումներ և հեղափոխություններ:

Հետընտրական ցույցերն այնուհետև վերածվեցին զանգվածային անկարգությունների: Մարտի 1-ին Երևանում իրավապահների ու ցուցարարների միջև տեղի ունեցած բախումների հետևանքով 10 մարդ զոհվեց, քաղաք էին բերվել զորքեր, հայտարարվել էր արտակարգ դրություն[10]:

Հետընտրական անհնազանդությունների ալիքի աճը շարունակվեց նաև 2013 թ., երբ Սերժ Սարգսյանը վերընտրվեց ՀՀ Նախագահի պաշտոնում: Այդ անհնազանդությունների ժամանակ տեղի ունեցան բախումներ ցուցարարների և ոստիկանության միջև, եղան վիրավորներ և ձերբակալություններ: Ընդդիմադիր Շանթ Հարությունյանի նախաձեռնությունը՝ հեղափոխություն իրականացնել Հայաստանում, ավարտվեց վերջինիս ձերբակալությամբ և 6 տարի ազատազրկմամբ[11]:

Բացի քաղաքական բնույթի քաղաքացիական անհնազանդություններից՝ 2013 թ. տեղի են ունեցել նաև սոցիալական հիմնախնդիրներով պայմանավորված բողոքի ցույցեր, օրինակ՝ կենսաթոշակային համակարգի ներդրման և ուղեվարձերի թանկացման դեմ շարժումը: Այդ իրադարձությունները պայմանավորել են քաղաքացիական անհնազանդությունների մակարդակի երրորդ խոշոր աճը 2008 թ. մարտի 1-ի դեպքերից հետո: Որոշակի աճ նկատվեց նաև 2015 թ., հատկանշական էր էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման դեմ երիտասարդության բողոքի ցույցը[12]:

2000-2017 թթ. ժամանակահատվածում քաղաքացիական անհնազանդությունների երկրորդ խոշոր աճը նկատվել է 2016 թ., երբ «Սասնա ծռեր» զինված խումբը գրավել էր ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գնդի տարածքը և պահանջում էր Սերժ Սարգսյանի հրաժարականն ու քաղբանտարկյալների ազատ արձակումը: Խմբավորման այս քայլը աջակցություն ստացավ հասարակության՝ իշխանությունից դժգոհ լայն շերտերից և այնուհետև վերաճեց քաղաքացիական անհնազանդությունների[13]: Հասարակությունը բաժանվել էր երկու մասի, որոնցից մեկը կատարվածը համարում էր ահաբեկչություն, իսկ մյուսը հերոսացնում էր գունդը գրաված զինված խմբա-

---

[10] Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հաշվետվությունները ՀՀ ընտրությունների վերաբերյալ (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.osce.org/odihr/elections/armenia:

[11] Տե՛ս **Ա. Ալեքսանյան**, Հայաստանի ժողովրդավարության մակարդակի ինդեքսը // Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի համեմատական վերլուծությունը մարդու իրավունքների և ժողովրդավարացման համատեքստում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Ուկրաինա, Մոլդովա), խմբ.՝ Ար. Ս. Ալեքսանյան, Եր., ԵՊՀ հրատ., 2016, էջ 47-48:

[12] Տե՛ս «Human Rights Watch. World Report 2016: Events of 2015», էջ 78-80 (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.hrw.org/sites/default/files/world_report_download/wr2016_web.pdf, «Amnesty International Report 2015/16: The State of the World's Human Rights», էջ 71-72 (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.amnesty.org/download/Documents/POL1025522016ENGLISH.PDF:

[13] Տե՛ս «Human Rights Watch. World Report 2017: Events of 2016», էջ 89-90 (վերջին մուտքը՝ 16.08.2018)՝ https://www.hrw.org/sites/default/files/world_report_download/wr2017-web.pdf:

վորմանը: Այս իրողությունը վկայում էր իշխանությունների լեգիտիմության անկման մասին: Բոլոր դեպքերում, կատարվածը բացասաբար ազդեց ոչ միայն պետության քաղաքական կայունության, այլև միջազգային վարկանիշի վրա:

Քաղաքացիական անհնազանդությունների մակարդակը կտրուկ մեծացավ 2018 թ. ապրիլին: Դրանք աննախադեպ էին իրենց տեսակով, քանի որ համաժողովրդական բնույթ ստացան: Հայաստանում նոր քաղաքական իրավիճակ էր ստեղծվել: Ապրիլի 23-ին քաղաքացիական անհնազանդության ու զանգվածային հանրահավաքների ազդեցության ներքո հրաժարական տվեց մեկ տասնամյակ նախագահի պաշտոնը վարած և ընդամենը վեց օր առաջ վարչապետի պաշտոնում ընտրված Սերժ Սարգսյանը*: Մի կողմից անարդարության մթնոլորտը, սոցիալ-տնտեսական բազում խնդիրներն ու հեղափոխության օրերի ներիշխանական անհամաձայնությունը, իսկ մյուս կողմից շարժման կազմակերպման գրագետ տեխնոլոգիաներն ու մոտեցումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ բողոքի իր ձայնը բարձրացրած բազմահազարանոց զանգվածը հստակ հետևում էր շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանի հրահանգներին, հնարավոր դարձրին իրականացնել միասնական և խաղաղ հեղափոխություն: Համաժողովրդական շարժման գործադրած աննախադեպ ճնշումը և կառավարող համակարգի դրսևորած նվազագույն հակազդեցությունն ապահովեցին իշխանության համեմատաբար անցնցում փոխանցումը նոր ուժերին՝ քաղաքական կայունության վրա նվազագույն բացասական ազդեցությամբ:

Հայաստանի քաղաքական կայունության վերջին տարիների դինամիկայի առավել խորքային վերլուծությունների համար հաշվարկվել է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (ՔՀԿԻ) (տե՛ս գծապատկեր 3)[14]:

---

* 2015 թ. սահմանադրական փոփոխություններով ամրագրվեց Հայաստանի անցումը կիսանախագահական քաղաքական համակարգից խորհրդարանական կառավարման, որով պետության նախագահի լիազորությունները խիստ կրճատվեցին՝ հօգուտ Ազգային ժողովի և վարչապետի լիազորությունների ընդլայման: Հանրապետության նախագահ Սերժ Սագսյանն իր պաշտոնավարման ավարտից մեկ շաբաթ անց՝ ապրիլի 17-ին, Ազգային ժողովի կողմից ընտրվեց վարչապետի պաշտոնում: Այս հանգամանքը պատճառ դարձավ քաղաքացիական անհնազանդությունների նոր և աննախադեպ ալիքի, որին հետևեց նրա հրաժարականը: Մայիսի 8-ին Ազգային ժողովում Նիկոլ Փաշինյանն ընտրվեց վարչապետի պաշտոնում:

[14] Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը քաղաքական, տնտեսական և սոցիալական գործոնների ագրեգացված ցուցանիշ է: Այն չափվում է -1-ից +1 միավորային սանդղակով, որտեղ -1-ը քաղաքական կայունության նվազագույն ցուցանիշն է, +1-ը՝ առավելագույն: ՔՀԿԻ-ի մեթոդաբանության մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Ալեքսանյան**, Հարավային Կովկասի, ԵվրԱզԷՍ-ի և ԵՄ-ի քաղաքական կայունության ինդեքսի համեմատական վերլուծություն // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 2014, № 1, էջ 42-46:

Հայաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը (2000-2017 թթ.)*



Ինչպես երևում է ՔՀԿԻ-ն 2000-2007 և 2010-2014 թթ. ունեցել է դրական միտումներ: Առաջին միջակայքում ուշագրավ է 2003 թ. անկումը՝ պայմանավորված նախագահական ընտրություններից հետո քաղաքացիական անհնազանդությունների մակարդակի աճով: Այնուհետև տնտեսական և մասամբ սոցիալական գործոնների դրական ազդեցության հաշվին ապահովվել է Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի անընդմեջ աճ՝ մինչև 2008-2009 թթ. քաղաքական իրադարձությունները և տնտեսական ճգնաժամը: ՔՀԿԻ-ի 2008 թ. անկումը մասնավորապես պայմանավորված էր մարտիմեկյան դեպքերով, որոնց բացասական ազդեցությունը պետության քաղաքական կայունության վրա այնքան մեծ է եղել, որ տնտեսական և սոցիալական համեմատաբար բարձր ցուցանիշները չեն կարողացել մեղմել այն: 2009 թ., ինչպես նշվեց, ՔՀԿԻ-ի անկումը շարունակվել է ֆինանսատնտեսական ճգնաժամի և ըստ այդմ՝ սոցիալական և տնտեսական ենթաինդեքսների նվազման պատճառով: 2010-ից սկսած ՔՀԿԻ-ի անընդմեջ աճն արդեն կասեցվեց 2013 թ. Քաղաքական գործոնների ինդեքսի անկմամբ: Քաղաքական կայունության վրա մասնավորապես բացասական ազդեցություն ունեցան, ինչպես նշվեց, նախագահական ընտրությունների հետընտրական գործընթացները և դրանով պայմանավորված քաղաքացիական անհնազանդությունների աճը, ինչպես նաև բողոքի ցույցերը՝ ընդդեմ կենսաթոշակային համակարգի ներդրման և ուղեվարձերի թանկացման:

* Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները:

2014 թ. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսը ոչ միայն վերականգնվեց, այլև գրանցեց բարձրագույն միավոր: Այսինքն՝ դա Հայաստանի համար ամենակայուն տարին էր, սակայն դրան հաջորդում է երկու տարվա անընդմեջ խոր անկումը: 2015 թ. Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի նվազման պատճառը քաղաքական և տնտեսական գործոնների նշանակալի ազդեցությունն էր: Տարին առանձնացավ քաղաքացիական ընդվզումների բարձր մակարդակով, որոնց արդեն անդրադարձել ենք: Ինչ վերաբերում է տնտեսական գործոններին, ապա նշված տարում գրանցվեց արտաքին առևտրաշրջանառության, տնտեսության վարկավորման, բյուջետային դեֆիցիտի, ինչպես նաև օտաերկրյա ուղղակի ներդրումների և մոդելում ընդգրկված մի շարք այլ ցուցանիշների վատթարացում:

2016 թ. գրանցվեց ՔՀԿԻ-ի ամենախոշոր անկումը: Ապրիլյան «Քառօրյա պատերազմը» Հայաստանի քաղաքական կայունության աննախադեպ անկման պատճառ դարձավ: ՊՊԾ գնդի գրավումն ու այդ հողի վրա քաղաքացիական անհնազանդությունների բարձրացած ալիքը ևս բացասական ազդեցություն ունեցան Հայաստանի քաղաքական կայունության վրա: Հատկանշական է, որ 2017 թ. արձանագրվեց ՔՀԿԻ-ի թռիչքային վերելք, որն ապահովվեց քաղաքական և տնտեսական ցուցանիշների վերականգնման շնորհիվ. 2017 թ. այն մոտեցել է 2014 թ. ինդեքսի ցուցանիշին:

Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի ռեգրեսիոն վերլուծությամբ ստացված տվյալների համաձայն՝ առավել նշանակալի ազդեցության գործոններից են Մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ)[15] և Ջինի ինդեքսը, որոնց դրական փոփոխությունը 0,1 միավորով կհանգեցնի ՔՀԿԻ աճին՝ համապատասխանաբար 0,3 և 0,1 միավորներով (տե՛ս աղյուսակ 1): Վերլուծությունը մասնավորապես վկայում է Հայաստանի քաղաքական կայունության վրա սոցիալական գործոնների ունեցած վճռորոշ ազդեցության մասին:

Աղյուսակ 1

Հայաստանի Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի ռեգրեսիոն վերլուծություն[16]

	B	Constant	Adj. R^2	Sig.
ՄԶՀ	2,842	-1,996	0,909	0,000
Ջինի ինդեքս	-1,025	0,431	0,701	0,000

[15] Մարդկային զարգացման համաթիվը հաշվարկվում է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից և հիմնվում է երեք չափորոշիչների վրա՝ կյանքի սպասվող տևողություն, կրթություն և եկամուտներ (համախառն ազգային եկամուտ):

[16] Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկները: ՄԶՀ-ն և Ջինի ինդեքսը ՔՀԿԻ-ի մոդելում ընդգրկված փոփոխականներից են, սակայն ռեգրեսիոն վերլուծություն կատարելու և դրանց ազդեցությունը ՔՀԿԻ-ի վրա որոշելու նպատակով այդ փոփոխականներից յուրաքանչյուրը նախապես դուրս է բերվել մոդելից:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանում վերջին տարիներին քաղաքացիական ընդվզումների աճը, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, հակամարտության գոտում պահպանվող լարվածությունը և ներքին ու արտաքին այլ քաղաքական հիմնախնդիրները վկայում էին իրավիճակի անկայունության մասին: Մասնավորապես նախկին իշխանությունների լեգիտիմության սպառումը պարբերաբար հանգեցնում էր սոցիալական անհանգստությունների և հասարակական տարբեր շարժումների ակտիվացման, որն իր գագաթնակետին հասավ 2018 թ. ապրիլին: Այդուամենայնիվ, հեղափոխություններից հետո, չնայած քաղաքական կայունության այս կամ այն չափով նվազմանը, պետությունների զարգացման ու անկման գործընթացները մեծապես կախված են լինում այն հանգամանքից, թե ովքեր և ինչ գաղափարախոսությամբ են լցնում նոր պետության բովանդակությունը:

Բանալի բառեր – *քաղաքական համակարգի կայունության ինդեքս, քաղաքացիական անհնազանդություններ, ընտրություններ, հեղափոխություն, ռեգրեսիոն վերլուծություն, ռազմական ծախսեր, ռազմականացում*

АРУСЯК АЛЕКСАНЯН – ***Стабильность политической системы Армении: факторы влияния и угрозы.*** – Стабильность политической системы – одна из наиболее актуальных тем современной политологии. Дестабилизация системы сопровождается ростом гражданского неповиновения и напряжённостью в обществе, при этом падает эффективность урегулирования конфликтов и управления социальными процессами. В статье проанализированы факторы, влияющие на политическую стабильность в Армении и угрожающие ей. Выделяются два основных фактора влияния: внешнеполитический (Карабахский конфликт и милитаризованность региона) и внутриполитический (нехватка легитимности, порождающая гражданские неповиновения). Для большей глубины и наглядности вычисляется Индекс стабильности политической системы страны с 2000-го по 2017 г. Посредством регрессионного анализа выявляются факторы, более всего влияющие на систему политической стабильности.

Ключевые слова: *Индекс стабильности политической системы, гражданское неповиновение, выборы, революция, регрессионный анализ, военные расходы, милитаризация*

ARUSYAK ALEKSANYAN – ***Stability of the Political System of Armenia: Factors of Influence and Threats.*** – The issue of political stability is one of the most relevant topics of modern political science. Destabilization is accompanied by an increase in the level of civil disobedience and tension in society, as well as by the decrease in the effectiveness of conflict resolution and of the management of social processes. The article analyzes factors and threats to the political stability of Armenia. The author highlights two main factors of influence: 1) external – the Karabakh conflict and militarization of the region and 2) internal – the lack of legitimacy, operationalizing the latter into the level of civil disobedience. For a deeper analysis, the Stability index of the political system of Armenia is calculated in a span of 2000-2017 years. Through the regression analysis, the factors, influencing the political stability of Armenia most of all, are also revealed.

Key words: *stability index of political system, civil disobedience, elections, revolution, regression analysis, military expenditures, reforms, militarization*